ՀԱՅԱԳԱՇԱՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՆ ՈՒ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ

Ա.Աթայան

գրականության եւ ժուռնալիստիկայի ամբիոն

Լուսաբաւ բանաստեղծ, գրականագետ-մանկավարժ, հասարակական գործ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Խանյանի ծննդյան 75-ամյակը:

Ստեղծագործական հինգ տասնամյակի ընթացքում նա մշտապես ունկնդրել ժամանակի ձայնը՝ բացահայտելով իր բանաստեղծական նախասիրությունները՝ քնարական հազեցվածություն, անմիջականություն, քաղաքացիական պաթոս, խոհակամություն: Իբրեւ բանաստեղծ-գրականագետ՝ նա իր կարողությունները նվիրել է հայրենի պոեզիայի եւ գրականագիտության զարգացմանն ու հարստացմանը:

Բնությունը շռայլ է գտնվել Ս. Խանյանի հանդեպ՝ ընծայելով ստեղծագործելու բազմաշերտ շնորհք եւ նախանձելի աշխատասիրություն: Նրա յուրաքանչյուր գիրք եղել է նախորդի պատվաբեր շարունակությունը՝ գաղափարական նոր ընդգրկումներով, կատարման նրբերանգների թարմությամբ:

Առանց Ս. Խանյանի գրական հունձքի դժվար է պատկերացնել Արցախի գրական օջախի դիմանկարը, իսկ բանաստեղծական ժողովածուների եւ գրական ուսումնասիրությունների թվարկումը պատկառանք է առաջացնում նրա արգասավոր տաղանդի, վառ երեւակայության, նախանձելի աշխատասիրության հանդեպ:

Բանաստեղծ Ս. Խանյանը երգում է հայրենիք, սեր, աշխատանք, խիղճ, երազ, կարոտ, հերոսություն, նահատակների փառք եւ այլն: Դա է կյանքը. կյանքից դուրս պոեզիա չկա,- հաստատում է Ս. Խանյանը:

Հիրավի, Խանյանի գեղարվեստական նախասիրությունների համակարգում բազմազան թեմաներն ու գաղափարական խորքային լուծումներն ապահովում են նրա անհատականությունը: Ստեղծագործական երկարամյա ճանապարհին նա երբեք չի դադարել որոնելուց՝ ընթերցողի սեղանին դնելով 15 բանաստեղծական ժողովածուներ, նույնքան գրականագիտական աշխատություններ, գրականության, արվեստի արդի պրոբլեմները քննարկող 350-ից ավելի հոդվածներ: Խանյանի բանաստեղծական եւ գրականագիտական յուրաքանչյուր գիրք արժանացել է անվանի գրողների ու բանասերների ուշադրությանը: Նրա մասին ծանրակշիռ կարծիք են հայտնել Ն. Զարյանը, Մ. Արմենը, Մ. Կորյունը, Ս. Արզումանյանը, Ս. Սողոմոնյանը, Դ. Գասպարյանը, Ժ. Անդրյանը, Մ. Սանթոյանը, Հ. Սերոբյանը, Գ. Գաբրիելյանը, Վ. Հակոբյանը եւ ուրիշներ:

Տարբեր փուլերում գրական քննադատության ակտիվ վերաբերմունքը Խանյանի ստեղծագործության նկատմամբ հետեւանք էր ընթերցող հասարակայնության վրա եւ գրական շրջաններում հեղինակի երգերի թողած որոշակի ազդեցության: Խանյանի գրչի բեղուն ունությունը, բանաստեղծական տարբեր ձեւերի մեջ որոնումները հաճելի հետաքրքրություն են առաջացրել ընթերցողների շրջանում: Նա միշտ էլ նոր ավյունով, պատասխանատվության զգացումով ու պահանջկոտությամբ է մոտեցել պոեզիային:

Սոկրատ Խանյանը ծնվել է 1930թ. հունվարի 22-ին, ԼՂ Հադրութի շրջանի Աղբուլաղ (այժմ՝ Ակնաբերդ) գյուղում: 1937-1944թթ. սովորել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, ապա միջնակարգը գերազանց գնահատականներով ավարտել հարեւան Էդիլլու (Ուխտաձոր) գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո երկու տարի աշխատել է հայրենի գյուղում: 1949-1953թթ. սովորել է Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժնում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունում որպես լրագրող: Ավարտելով ասպիրանտուրան՝ 1965թ. Հայաստանի ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանել է թեզ՝ «Ն. Զարյանի դրամատուրգիան» թեմայով եւ արժանացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի, իսկ 1970թ. ստացել է դոցենտի կոչում:

1965-69թթ. աշխատել է Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում՝ որպես դոցենտ: 1969թ. տեղափոխվել է Ստեփանակերտ եւ շարունակել աշխատանքը նորաբաց մանկավարժական

հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում: 1974-75թթ. զբաղեցրել է ինստիտուտի դաստիաբակության գծով պրոռեկտորի պաշտոնը, իսկ 1974-79թթ. ղեկավարել է բանասիրական ֆակուլտետը՝ որպես դեկան: 1984 թվականից վարում է հայոց լեզվի եւ գրականության, ապա՝ գրականության եւ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչի պաշտոնը: 1991թ. Ս. Խանյանը Կիրովականի մանկավարժական ինստիտուտի գիտական խորհրդում մրցույթով ընտրվել է պրոֆեսորի պաշտոնում: 2002թ. ՀՀ ԳԱԱ Մ. Աքեղյանի անվան գրականության ինստիտուտում նա պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-90-ական թթ.)» թեմայով՝ ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Ս. Խանյանը հանրապետությունում առաջինն է, որ ՀՀ ԲՈՀ-ի կողմից արժանացել է պրոֆեսորի դիպլոմի:

Ակնառու է նաեւ Ս. Խանյանի հասարակական գործունեությունը: 1970-80-ական թթ. ղեկավարել է ԼՂ մարզային «Գիտելիք» ընկերությունը, եղել է խաղաղության պաշտպանության ԼՂ կոմիտեի նախագահ՝ մեր երկրամասի աշխատավորության ձայնը հինգնկնելով Հունգարիայում, Ավստրիայում, Նորվեգիայում: Նա երկու անգամ ընտրվել է արհմիությունների մարզային կոմիտեի անդամ: 1978թ. պարգեւատրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով, իսկ 1990թ.՝ ԽՍՀՄ բարձրագույն դպրոցի պետական կոմիտեի «Աշխատանքային գերազանց հաջողությունների համար» կրծքանշանով: 1988թ. իր ընկերների հետ մեկտեղ Ս. Խանյանը գտնվել է Արցախյան ազգային-ազատագրական պայքարի առաջին շարքերում: 1992թ. դարձել է ԼՂՀ նախարարների խորհրդի Եղիշեի անվան մրցանակի դափնեկիր՝ «Արցախի արծիվը» պոեմի համար: 1998-ին արժանացել է ԼՂՀ գրողների միության Մուրացանի անվան ամենաամյա մրցանակի՝ «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» աշխատության համար: 1998-ին պարգեւատրվել է «ԱրՊՀ 30-ամյակի» հուշամեդալով, 2002-ին՝ ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ», ապա՝ «Մայրական երախտագիտություն հայ քաջորդիներին» մեդալներով, արժանացել է նաեւ տասնյակ պատվոգրերի:

Ս. Խանյանի առաջին գիրքը տպագրվել է 1953թ.՝ «Կարկաչ» խորագրով, որի մասին դրվատանքի խոսք են ասել անվանի գրող Ն. Զարյանը, արձակագիր Մ. Դավթյանը, գրականագետ Ս. Սողոմոնյանը, Ս. Արզումանյանը, Ժ. Ասդրյանը: Բանաստեղծի երկրորդ գրքույկը՝ «Բարեկամություն» վերնագրով, լույս է տեսել 1963թ.: Ժողովածուն նոր քայլ էր թեմաների, ստեղծագործական նոր ձեւերի յուրացման, բանաստեղծական խոսքի կատարելագործման առումով: Մ. Կողյունը իր գրախոսականում նշել է. «Ո՞րն է Խանյանի բանաստեղծությունների դրականն ու գրավականը... Հեղինակը ցուցաբերել է անսնթեւեթ, պարզ ու անկեղծ գրելու անժխտելի կարողություն: Երբ ասելիք կա, նա կարողանում է գտնել արտահայտչական դիպուկ ձեւեր եւ ցանկացած տրամադրությամբ վարակել ընթերցողին»:

Գնալով բանաստեղծի խոսքը ավելի է հարստանում, նոր գույներ առնում: Եվ ընթերցողի հետ Ս. Խանյանը հանդիպում է 1966թ. իր նոր՝ «Սիրտս ձեզ հետ է» խոսուն վերնագրով ժողովածուով: Այստեղ բանաստեղծի ներշնչանքի աղբյուրը հայրենի բնաշխարհն է, նրա երփներանգ գույները, փրփրաբաշ գետերը, դարավոր անտառները, անմոռանալի մանկությունն ու պատանեկան երազանքները, հայրենական օջախի կրակը, մոր թխած հացի բույրը, առաջին սիրո շշունջները, հայ մարդու ազնիվ ու անմնացորդ հայրենասիրությունը: Ժողովածուի մասին դրվատանքի խոսք ասաց նշանավոր արձակագիր Մ. Արմենը՝ ընդգծելով. «Սոկրատի մոտ պայծառ են ոչ միայն տրամադրությունները, այլեւ քնության կողմերն ու երեւույթները, պայծառ են բառերը... Հաճելի է կարդալ Սոկրատին, որի մոտ այնքան արեւ կա եւ լավատեսություն՝ հակառակ մի քանի երիտասարդ եւ ոչ երիտասարդ բանաստեղծների, որոնց մոտ ոչ միայն մռայլ է ընդհանուր տրամադրությունը, այլեւ՝ դրա հետ սերտորեն կապված համեմատություններն ու բառային մատերիալը: Սոկրատի բանաստեղծությունների մի այլ արժեքավոր կողմը դրանց հուզականությունն է»:

Հաջորդ՝ «Արեւսար» ժողովածուում ելս Խանյանը հարազատ մնաց զգացմունքի բնականությանը, ստեղծագործության բովանդակության եւ ձեւի ներդաշնակության պահանջին:

Հասունացման մի նոր աստիճան հանդիսացավ Ս. Խանյանի 1972թ. տպագրված «Լեռների երգը» ժողովածուն: Գրականագետ Դ. Գասպարյանը նշեց. «Ս. Խանյանի պոեզիայում հայրենիքն ու քնարական հերոսը հանդես են գալիս միաձույլ, ոչ իրարից մեկուսացված... Բանաստեղծի մոտ հայրենիք հասկացությունը հաճախ բացահայտվում է հայրենի եզերքի

նկարագրով»: Հիրավի, հայրենիքը Խանյանի համար վերացական հասկացություն չէ: Այն սկսվում է հայրական օջախից, ծննդավայրից, որտեղ կան աստղերին հասած լեռներ, մայրական կաթի պես քաղցր, սենդատու աղբյուրներ, մարդու ոտքերին սովոր կածաններ... Խանյանի բանաստեղծական հոգում հայրենի երկրի եւ ժողովրդի ճակատագիրն առնչվում է աշխարհի ու մարդու ճակատագրի հետ: Այս ժողովածուով բանաստեղծը հաստատում է իր առողջ ու ամուր կապը կյանքի ամենաբազմազան հարցերին: Նա երբեմն հայացքը հառում է պատմական անցյալին, այնտեղից փնջում պայքարի ու հերոսության շողեր, պապերի օրինակով սերունդներին մատուցում այն դասը, որ կոչվում է խիզախության եւ հարատեւման ազդակ:

Ս. Խանյանի հայրենասիրական քնարը հարստանում է «Արեւսար» լեգենդով, «Մորմոքներ» շարքով: Վերջինս Մեծ հայրենականում նահատակված հերոսների հանդեպ երախտագիտական զգացումի արտահայտություն է, մյուս կողմից՝ հայրենիքին անմնացորդ ծառայելու հավերժական օրինակի վավերագրություն: Ավ. Իսահակյանից, Հ. Շիրազից հետո, թվում է, դժվար է մայրական թեմայով երգեր գրելը: Ս. Խանյանի «Մոբս հիշատակին» շարքը նոր խոսք է թե՛ թեմայի բացահայտման, թե՛ գեղարվեստական առանձնահատկությունների տեսակետից: Շարքում արտահայտված է որդու կարոտը հուշ դարձած մոր հանդեպ, ընդգծված՝ մոր վեհությունն ու որդու անմնացորդ սերը: Մանկության՝ հավերժությունը բանաստեղծը տեսնում է մոր լինելության մեջ: Հայ գեղջկուհու ապրած օրերի, դեպի երեխաներն ունեցած զգացումների հուզաթաթավ երգերով Ս. Խանյանը հյուսել է այն իրական հնչիաթը, որ կարելի է կապել միայն մոր հետ:

Քանաստեղծությունը ծնվում է կարոտից: Կարոտը մանկության, քնության, սիրո, աշխարհի, հարազատների հանդեպ հոգեւոր լիցքեր է հաղորդում ու դառնում երգի աղբյուր: Վկան՝ 1975թ. լույս տեսած «Ապասում ենք դեռ» ժողովածուն, որի մասին գնահատանքի խոսք ասաց պրոֆ. Ս. Ավագյանը: Ժողովածուն Մեծ հայրենականի գեղարվեստական արտացոլումն է: Հեղինակի ուշադրության կենտրոնում ոչ թե ռազմաճակատային իրադարձություններն են, այլ մարդկային հոգեվիճակներն ու ճակատագիրը:

Քնությանը դիմելը Ս. Խանյանի համար նման է դավանանքի: Սահյանական արվեստից շատ բան սովորելով, առանց կրկնելու իր ուսուցչին՝ Խանյանը ստեղծել է ուշագրավ պատկերներ.

Այն ո՞վ է ասել՝ հոգը սիրտ չունի,
Եթե սիրտ չունի,
Ապա ինչո՞ւ է կարոտում այնպես,
Երբ հեռանում ենք...
Եթե սիրտ չունի,
Ապա ինչո՞ւ է խռովում այնպես,
Երբ մոռանում ենք...

Սարերի ու դարերի ընդհանուր կապի մեջ բանաստեղծը խորհրդանշում է մայր ժողովրդի ճակատագիրն ու անցած ուղին:

1978թ. հրատարակվում է «Լեռնային ղողանջներ» ժողովածուն, ուր բանաստեղծն ընդգծում է այն ճշմարտությունը, որ երգը ծնվում է կյանքից, օջախից, աշխարհից, կարոտից: Դեպի հայրենի Ղարաբաղն ունեցած սերը Խանյանի արյան ու հոգու մեջ ծիածանի գույներ ունի: Դա սիրո սովորական արտահայտություն չէ, այլ սիրտը միշտ արթուն ու բաբախուն պահող ցավ: «Քո անունից» գրքի «Ղարաբաղյան նվագներ» շարքը հայ պոեզիայում Ղարաբաղի կերպարի ստեղծման թարմ ու ինքնատիպ երեւույթներից է:

Քառյակը բավականին տարածված ժանր է հայ քնարերգության մեջ: Խանյանն այդ ժանրին ձեռք է մեկնել հասուն տարիքում: Ահա թե ինչու կենսափորձից ծնված խորհուրդները հնչում են որպես դաս, որպես ինքնախոստովանանքի լուսավոր զգացումներ, որպես բարության, սիրո, վայելքի աստվածային պարգեւներ: Խանյանի քառյակներում սերը տառապանքից ծնված կրակ է՝ մաքրված, բյուրեղացած, հավերժացած: Նրա քառյակները ժանրի դասական կուտակումների անզուգական օրինակներ են:

Ծննդյան 60-ամյակի առթիվ հրատարակվեց Ս. Խանյանի «Կարոտի կրակներ» ընտրանին, որի մասին ծավալուն գրախոսականներով հանդես եկան բանաստեղծ Գ.

Գաբրիելյանը եւ բանասեր-լրագրող Վ. Աթանենսյանը: Նրանք նշեցին, որ բանաստեղծի հունձքը արժանի է գրականագիտական լուրջ գնահատականի: Վ. Աթանենսյանը ընդգծել է. «Պաշտպանում եմ ազգային դիմագծի այն առանցքը, որ արցախահայ գրականությունը կարողացել է բոլոր փորձություններից անաղարտ պահել: Ս. Խանյանի «Կարոտի կրակների» հիմքը դա է»:

Բանաստեղծի քնարն ճանաչարիի եւ ինքնահաստատման երեւույթներ հանդիսացան նրա «Արցախյան ոդոդանջներ» եւ «Իմ ծիածանը» ընտրանիները՝ տպագրված Երեւանի պետհամալսարանի եւ «Սոնա» հրատարակչությունների կողմից: Անվանի գրականագետ Ս. Դանիելյանը այդ առիթով գրել է. «Քնդմնավոր ու շռայլ գրիչ ունի Սոկրատ Խանյանը: Ավելացնենք նրա մենագրական աշխատանքները Ն. Զարյանի, Թ. Հուրյանի եւ հայ գրական այլ մշակների մասին, արդյունքում կուենենք անդադրում տրոփող սիրտ, հայ բանաստեղծին միշտ անմար պահող սիրտ»:

Խանյանի պոեզիան հյուսվում է հայ պոեզիայի ավանդույթների հենքի վրա: Նրա պատկերներն ինքնաբուխ են, սենսական աշխարհընկալման դրդմամբ ակնհայտ է:

Մեծ է Ս. Խանյանի վաստակը Արցախի գոյամարտը գեղարվեստորեն պատկերելու առումով: Բազմաթիվ գրականագիտական ուսումնասիրությունների հետ նա ընթերցողի սեղանին դրեց «Արցախի արծիվը» պոեմը, որն արժանացավ ԼՂՀ նախարարների խորհրդի 1992թ. Եղիշեի անվան մրցանակին: «Այդ պոեմը ընդհանրության մեջ ընկալվում է որպես հին ու նոր ժամանակների խորքից ելած տաղանդավոր մի գրչի հիշատակարան: Հիշատակարան՝ հաջորդ հին ու նոր գոյամարտի»,- ընդգծում է տաղանդավոր բանաստեղծ, գրականագետ Վարդան Հակոբյանը պոեմի առաջաբանում: Էպոսային հյուսվածքով աչքի է ընկնում նաեւ Ս. Խանյանի «Նահատակ լուսո» պոեմը՝ նվիրված Ղարաբաղյան պատերազմի լեգենդար հերոս Մոնթե Մելքոնյանի (Ավո) սուրբ հիշատակին: Քնարական շաղախով հերոսական այս պոեմում բացահայտված են հայրենասեր զորապետի հերոսականության պահանջները:

Օրերի հետ համաչափ թայլող բանաստեղծ է Ս. Խանյանը: Ապրել է բարդ, բազմաթովանդակ ու ներդաշնակ կյանք: Ժողովրդի ճակատագրի հետ կապված մտահոգիչ հարցերին նա պատասխանել է եւ որպես բանաստեղծ ու լրագրող, եւ որպես գրականագետ ու հասարակական գործիչ: Ս. Խանյանի գիտամանկավարժական գործունեությունը շուրջ 50 տարեկան է: Նրա անունն անխզելիորեն կապված է Արցախի պետական համալսարանի հետ, ուր դասախոսական երկարամյա աշխատանքին զուգահեռ զբաղվել է գրականագիտությամբ:

Գեղարվեստական մտքի զարգացման պատմությունն ապացուցում է, որ եթե ստեղծագործող աշխարհ է ելել արյան կանչով ու հոգու կոչով, ապա նա կարողանում է հավասարապես ծառայել եւ պոեզիային, եւ գրականագիտությանը:

Արցախում ստեղծվող գրականության ընթացքը միշտ եղել է Ս. Խանյանի ուշադրության կենտրոնում: Ուշագրավ են «Ցավի եւ սիրո պոեզիա» (վ. Հակոբյանի պոեզիայի մասին), «Բոգդան Զանյանի պոեզիան», «Գուրգեն Գաբրիելյանի աշխարհը», «Տաղանդի լույսը (Ժ. Անդրյանի մասին), Նվարդ Ավագյանի պոեզիան», «Ա. Թովմասյանի քնարերգությունը», «Հր. Բեգլարյանի քնարերգությունը» գրքերը, որոնք արժանացել են ականավոր գրականագետների ուշադրությանը:

«Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» աշխատության առաջաբանում բանասիրական գիտությունների դոկտոր, Երեւանի պետական համալսարանի պրոֆեսոր Զ. Ավետիսյանը գրում է. «Ս. Խանյանը արցախյան դրամատիկ ու հերոսական իրադարձությունների հետ կապված մարդկային ցավի ու հերոսականության անմիջական կրողներից է, ինչը պայմանավորել է ոչ միայն նրա ուսումնասիրության թեմատիկ ընտրությունը, այլեւ գրականագիտական ասելիքի ոճային առանձնահատկությունը»:

Իրոք, աշխատության մեջ Արցախյան պատերազմը գնահատվում է որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական ու բախտորոշ էջերից մեկը: Հեղինակը գրականագիտական հմտությամբ իր ասելիքի արմատները որոնում է մեր դասական ավանդների մեջ՝ խարխլվելով բանաստեղծական նոր հունձքի շրջանակներում: Սա նորօրյա բանասիրական մոտեցում է, որը ժխտում է գեղարվեստական երկի մակերեսային վերլուծությունը՝ գնալով դեպի խորքային-հոգեբանական շերտեր: Հարցի պարզաբանումը որոշակի առումով ընթերցողին ծանոթ է Ս. Խանյանի տասնյակ մենագրություններից ու բազմաթիվ գիտական հոդվածներից: Ս. Խանյանը սկզբունք ընդունելով գեղարվեստական գրականության անքակտելի կապը պատմության հետ՝ քննում է 50-90-ական թվականների

գրական-պատմական պրոցեսները եւ այդ համապատկերում լուսաբանում հայրենիքի թեմայի արծարծումը հայ պոեզիայում: Գիրքը 50-90-ական թվականների հայոց հայրենապատում գաղափարական ուղղվածության, 20-րդ դասի երկրորդ կեսի գրական շարժման մի շարք առանձնահատկությունների օբյեկտիվ բացահայտման հետաքրքիր օրինակ է, որն արժեքավոր է եւ՝ որպես երեւույթ, եւ՝ որպես գրական-պատմական մնայուն արժեք:

Հետաքրքիր են ուսանելի ձեռնարկ է Ս. Խանյանի «Հայ գրականության ուսուցումը բուհում» գիրքը՝ մեթոդական ցուցումների, հայ գրականության ծրագրի, մատենագիտության ընդգրկմամբ: Նրանում հեղինակը խոսում է գրականության առանձին բաժինների ուսուցման օրինաչափությունների մասին՝ հենվելով դասական մեթոդական առաջավոր ավանդույթների, ինչպես նաեւ իր փորձի վրա՝ հաշվի առնելով ժամանակակից դասին ներկայացվող պահանջները: «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-1990-ական թթ.)» աշխատությունը արժանացել է ականավոր գրականագետների բարձր գնահատականին: Այն գրականագիտական հասուն գրչի արդյունք է, որն էլ հիմք է դարձել նրա դոկտորակուսն ստանձնախոսության:

Այսօր բոլոր բուհերի բանասիրական ֆակուլտետների մագիստրատուրաների ուսումնական պլաններում մտցված է »Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան« առարկան: Առաջին անգամ հայ իրականության մեջ Ս. Խանյանը ստեղծել է «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան» դասագիրքը, որը ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարության կոլեգիայի կողմից երաշխավորվել է տպագրության: Գիրքն արժանացել է ԲՈՀ-ի՝ գրականագիտության գծով հանձնաժողովի բարձր գնահատականին, որի համար Ս. Խանյանը հաստատվել է որպես պրոֆեսոր: Դասագրքում Խանյանը լուսաբանում է ազգի ճակատագիրը՝ առասպելական շրջանից մինչեւ մեր օրերը: Հեղինակն առանձին-առանձին գլուխներով ներկայացրել է հայ հին եւ միջնադարյան գրականության մեջ խնդրո առարկա թեման, հայ նոր պոեզիայում թեմայի բանաստեղծական արծարծումը՝ Աբովյանից մինչեւ Դուրյան: Առանձին բաժիններով ներկայացվում է Թումանյանից մինչեւ Ռ. Մեսակ, ապա նորագույն շրջանը՝ Ե. Չարենցից մինչեւ Ռ. Դավոյան, այդ թվում նաեւ՝ Արցախի բանաստեղծների գրական հունձքը:

Ներկայացված է տպագրության Ս. Խանյանի «Պոեզիայի զարգացման միտումներն Արցախում (1950-2000թթ.)» գիրքը, որը ընթության առարկա է դարձրել Արցախի պոեզիայի զարգացման օրինաչափությունները՝ կապված մեր գրականության ընդհանուր զարգացման տենդենցների հետ:

Ս. Խանյան բանաստեղծը, գրականագետ-մանկավարժը միշտ հետեւում է ինքնաբացահայտման ու ինքնահաստատման անհրաժեշտ սկզբունքներին, ինչ արել է, համարում է քիչ՝ ցուցաբերելով նախանձելի, արտասովոր աշխատասիրություն: Այդ են վկայում տպագրության համար պատրաստած նրա բանաստեղծական ու գրականագիտական նոր ժողովածուները: Եթե դրանց գումարենք Խանյանի ակտիվ մասնակցությունը Արցախի պետական համալսարանի գործընթացին՝ որպես ամբիոնի վարիչ, գիտական խորհրդի անդամ, ԼՂՀ գրողների միության վարչության, Ստեփանակերտի վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ, ինչպես նաեւ ընդգծենք նրա ծանրակշիռ եւ օրինակելի հրապարակային ելույթներն ու զեկուցումները հանրապետությունում արդյունքում մեր առջեւ կհասնի յոթանասունհինգամյա մի գործիչ՝ նրիտասարդական ավյունով ու երազանքներով: Ուշագրավ խոսք է Ս. Խանյանի պետական այս ընդհանրացումը:

Անց են կենում օրերս՝
Կանաչ-կարմիր շորերում,
Թռվռում են լորերս
Իմ կարոտի ծորերում:
Հետ բերելու հույս չկա,
Ձնոք մնկնելու ի՞նչ իմաստ,

Շոշափում եմ իմ սիրտը
Երազներն իմ անկա:
Լույսի թելեր եմ մանում,
Հիմնում եմ նոր մի կամար,
Թենուց տեսնել եմ կյանքում
Քանի՞ գարուն ու ամառ:

Նորից ծփանք է տալիս
Դեմս ծնողան արնի...
Հոգիս խուտուտ է գալիս՝
Խորքում գանձ կա երնի:

Այդպես էլ կա: Շնորհավորում ենք մեր հարգելի հոբելյարին, մաղթում քաջառողջություն եւ երկար տարիների կյանք՝ ի փառս մեր հայրենի գրականության ու գրականագիտության զարգացման ու հարստացման:

Ամփոփում

Սույն հոդվածում ձգտել ենք համառոտակի դիտարկել ու գնահատել Ս.Խանայանի բանաստեղծական ու գրականագիտական վաստակը:

Ս.Խանյանը իր գրական հունձքով լրացնում է Արցախի գրական օջախի դիմանկարը. Բանաստեղծ գրականագետը ընթերցողի սեղանին է դրել 15 բանաստեղծական շողոմածուներ, նույնքան գրականագիտական աշխատություններ, գրականության, արվեստի արդի պրոբլեմները քննարկող 350-ից ավելի հոդվածներ:

Քննարկելով Ս.Խանյանի պոեզիան, նկատել ենք, որ բանաստեղծի ներշնչանքի աղբյուրը հայրենի եզերքն է, նրա դարավոր պատմությունը, ներկան, իր մանկությունն ու պատանեկան երազները, հայրենի օջախի կրակը, I սիրո շշունջները, հայրենասեր մարդու նվիրվածությունը հայրենի հող ու ջրին: Յուրաքանչյուր մոտիվ հնչում է որպես հեղինակի կենսափորձից ծնված ինքնախոստովանանքի լուսավոր զգացում:

Ուսումնասիրելով նրա գրականագիտական վաստակը նկատել ենք, որ Արցախում ստեղծվող գրականության ընթացքը միշտ եղել է գրականագետի ուշադրության կենտրոնում, իսկ նրա «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան», «Հայ գրականության ուսուցումը բուհում», «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-90թթ.)», «Ազգային ճակատագիրը եւ հայ պոեզիան», «Պոեզիայի զարգացման միտումներն Արցախում (1950-200թթ.)» գրքերը շատ կողմերով կարող են օգնել թե՛ ուսանողությանը եւ թե գրականության հարցերով զբաղվողներին:

Резюме
Атаян А.М.

В этой статье постарались кратко обсудить и оценить поэтические и литературоведческие достижения С. Ханяна.

С.Ханян своими литературными достижениями дополняет общую картину литературного очага Арцаха.

Поэт-литературовед вниманию читателя предложил около 15-ти поэтических сборников, столько же литературоведческих исследований, сотни статьей затрагивающих проблемы современной литературы и искусства.

Источником вдохновения поэта является его родной край, вековая история и настоящее, его детство и юношеские мечты, плямя родного очага, отзвуки первой любви, привязанность человека-патриота к своей родной земле.

Каждый мотив является отзвуком, светлым чувством, рожденным с опытом поэта и его самоутверждением.

Процесс развития литературы в Арцахе всегда находится в центре внимания поэта, а его труды “Арцахская война и армянская литература”, “Обучение литературы в вузе, “Судьба родины в армянской поэзии (1950-90гг)”, “Национальная судьба и армянская поэзия”, “Традиции развития поэзии в Арцахе (1950-2000гг.)” являются учебными пособиями как для студентов, так и для преподавателей.